

գոյն եասաղ արար զի մի ոք մտցէ յապարանս արքայի մօրուսաւոր կամ փակեղօք. եղեւ... անատուցոց թուրքաց արզուհալ թագաւորի, զոր իմացեալ վէզիրի բերեալ գանէր բազում... ի թէրսխանէ եւ ահացուցանէր զամենայն: Եւ երկրորդ պատճառ աւսացին՝ զմէյխանէ Եէնկիղափուին բանալ կամեցեալ, զոր փակեալ էր այս աղան, եւ նալ էր Այլէ սուլթանի, և ռիճա արարեալ առ վէզիր՝ թէ բացվի. այս Բ պատճառաւս տարեալ առաջի իւր, ոչինչ խօսեալ՝ այլ ամենայն կերպարանօքն կախէր: Սա զմին եկեղեցին զնէր եւ յորժամ քակեցին՝ փախեալ. եւ արդ վասն այլոց սա հոգացեալ և ինքն մահանայր և այլքն փախչէին և զամենայն տուն նորա առնէին ի միրին: Եւ Եշի աւուր ի հիմանց քակեցին զմէյխանէն Եէնկիղափուի, որ կայր բազում ժամանակաց. և զմարմին նորա ծախէր սուպաշին արանց նոցա: Թէսքէրէն զրկէ սուլթանն աղային, աղան տայ ի վէզիր, վէզիրն տայ ի թագաւորն. Բ փաշա առ իւր բերեալ եւ առաջի բազմոցին գլխատեալ, եւ զԹէքէլին աքսորեալ եւ զԵրուսաղէմի փաշայի գլուխն բերեալ:

Թագաւորն տեսեալ զերկտասարդ մանուկ մի զըրուցատրեալ ընդ կնոջ միոյ եւ առաքեալ զխասէքի բերել առաջի իւր, եւ նա իջեալ չգտանէ, վասն որոյ եւ այսր անդր [ոչ] գտեալ, մինչև հասանէ բանն առ վէզիրն եւ նա հեծեալ հասանէ առ թագաւորն եւ նա պահանջէ, վասն որոյ եւ զնացեալ ի շուկայս, եւ զորս միանգամ գտանէին՝ բերէին առ վէզիր եւ մուշկուր աղայի սպասաւորք առնէին զբամս յամենից և փրկէին. եւ ամենայն ոք զձեւս կերպարանաց չքէր: Գտեալ յաւուրս զՂարայ Մուստաֆա ի ձեւս մուրողի շրջողի տէվրիշի եւ տարեալ առ վէզիր, եւ նա առաքէր ի տուն իւր, զի չկարաց վէզիրն... ինչ վասն